

Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2011 թվականի մայիսի 10-ին կայացած նիստի

ք. Երևան

Նախագահում էր՝

S. Սարգսյան ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)

Մասնակցում էին (խորհրդի անդամներ)՝

- Ա. Քարամյան ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ)
- Վ. Տերտերյան ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
- Ա. Ասատրյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
- Վ. Արամյան ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
- Կ. Ղազինյան ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
- Ա. Ղուկասյան ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
- Ա. Նազարյան ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ
- Ս. Պետրոսյան ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ
- Ա. Պողոսյան ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ
- Ռ. Մարկոսյան Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար)
- Զ. Լավյան «Եվրոպական երիտասարդական ակումբների համադաշնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ
- Լ. Նալչաջյան «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ
- Ա. Մխիթարյան «Երիտասարդական ակումբների դաշնություն» հասարակական կազմակերպության նախագահ
- Ա. Թադևոսյան «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ
- Է. Հակոբյան «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ
- Յ. Ակոպյան Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ
- Հ. Ափյան Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի փոխնախագահ
- Գ. Իսկանդարյան Երիտասարդ առաջնորդների դպրոցի կոորդինատոր
- Ռ. Սարգսյան «Երիտասարդական այլք» հասարակական կազմակերպության նախագահ
- Մ. Մովսիսյան «Երիտակ» հասարակական կազմակերպության անդամ
- Ա. Հակոբյան «Հզոր հասարակություն» հիմնադրամի գործադիր տնօրեն

Հրավիրված էին՝

- Վ. Գաբրիելյան ՀՀ ֆինանսների նախարար
- Հ. Թովմասյան ՀՀ արդարադատության նախարար

Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ա. Պապյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդության հարցերի վարչության պետի պաշտոնակատար
Կ. Մովսիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ

1. ՀՀ երիտասարդության ազգային զեկույցի մշակման աշխատանքների մասին

(Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

1. Օրակարգի 1-ին հարցը զեկույցեց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի

նախարարի տեղակալ Ա. Քարամյանը: Նա կարևորեց նպատակային ազգային երիտասարդական քաղաքականության մշակումն ու զարգացումը, որը պետք է իրականացվի տարբեր երիտասարդական ուսումնասիրությունների, մասնավորապես երիտասարդության ազգային զեկույցի միջոցով: Ա. Քարամյանը տեղեկացրեց նաև, որ երիտասարդության ազգային զեկույցը համարվում է ոլորտի հիմնարար փաստաթուղթը, որը պետք է մանրամասն ներկայացնի երիտասարդների առկա վիճակը, նրանց խնդիրները և ուղենիշ լինի համապատասխան ծրագրերի և նախաձեռնությունների համար: Վերջինիս միջոցով նաև պետք է գնահատվեն երիտասարդության քաղաքականության արդյունքները: Ա. Քարամյանը հավելեց նաև, որ Հայաստանի երիտասարդության առաջին ազգային զեկույցը մշակվել է 2006-2007 թթ., այն հրապարակվել է հայերեն և անգլերեն: Վերջին տարիներին տեղի ունեցող գլոբալ փոփոխությունների արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով ուսումնասիրությունների հնգամյա պարտադիր պարբերականությունը՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել երիտասարդության ազգային նոր զեկույց: Ազգային զեկույցի մշակման և հրապարակման աշխատանքները համակարգելու նպատակով առաջարկվեց ստեղծել աշխատանքային խումբ, որը մեկամսյա ժամկետում պետք է ներկայացնի Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի մշակման և հրապարակման աշխատանքների համալիր ծրագիր և Խորհրդի հետագա նիստերում պարբերաբար ներկայացնի հաշվետվություն աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

2. Խորհրդի անդամների կողմից առաջարկվեց ներկայացված աշխատանքային խմբի կազմում ընդգրկել նաև հետևյալ անդամներին.

Հ. Ավիյան - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի փոխնախագահ,

2. Լավյան - «Եվրոպական երիտասարդական ակումբների Նամադաշնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ,

Ա. Միրզախանյան - ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ:

3. Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ներկայացված որոշման նախագիծը՝ ներառելով խորհրդի նիստում հնչեցված առաջարկությունները:

2. Երիտասարդ գործարարների համահայկական առաջին համաժողովի կազմակերպման մասին

(Ա. Քարամյան, Տ. Սարգսյան)

1. Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանը: Կարևորելով երիտասարդ գործարարների միջև շփումների ակտիվացումը՝ նա առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ, որը մեկամսյա ժամկետում կներկայացնի Երիտասարդ գործարարների համահայկական առաջին համաժողովի կազմակերպման (2011թ. հոկտեմբեր-նոյեմբեր) համալիր ծրագիր և խորհրդի հաջորդ նիստում կներկայացնի հաշվետվություն աշխատանքների ընթացքի վերաբերյալ: Որպես խմբի ղեկավար առաջարկվեց ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի թեկնածությունը:

Ա. Քարամյանը առաջարկեց նաև Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված «Համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների (փառատոտոններ, համաժողովներ, գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ՝ կրթական, հոգևոր-մշակութային, սպորտային) կազմակերպում» ծրագրի շրջանակներում ֆինանսավորել գործարարների համահայկական առաջին համաժողովի կազմակերպման աշխատանքները:

2. ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ա. Պետրոսյանը, նկատի ունենալով ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի զբաղվածությունը, նպատակահարմար համարեց խմբի ղեկավարումը վերապահել Ա. Քարամյանին, իսկ ՀՀ սփյուռքի նախարարության մասնակցությունն ապահովելու նպատակով խմբում ընդգրկել խորհրդի անդամ, նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության պետ Ատոմ Մխիթարյանին:

3. Խորհրդի անդամների կողմից առաջարկվեց աշխատանքային խմբում ընդգրկել նաև հետևյալ անդամներին.

Է. Հակոբյան - «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ,

Գ. Իսկանդարյան - Երիտասարդ առաջնորդների դպրոցի համակարգող,

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմից՝ մամուլի, տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապի վարչության պետ Ս. Մկրտչյանին:

4. Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ներկայացված որոշման նախագիծը՝ ներառելով խորհրդի նիստում հնչեցված առաջարկությունները:

3. Առցանց դրամաշնորհային համակարգի կիրառման ընթացքը

(Ա. Թադևոսյան, Տ. Սարգսյան)

1. Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Թադևոսյանը: Նա ներկայացրեց առցանց դրամաշնորհային համակարգի առկա իրավիճակը՝ նշելով, որ համակարգը ֆունկցիոնալ տեսանկյունից լավ է գործում և արժանացել է բավականին բարձր գնահատականի եվրոպական մի շարք կազմակերպությունների փորձագետների կողմից: Համակարգում արդեն իսկ գրանցված են 111 կազմակերպություններ, ևս հինգ կազմակերպություններ գտնվում են գրանցման փուլում: Նա նշեց նաև, որ մեկ տարվա ընթացքում համակարգն առավել կկատարելագործվի, եթե ներգրավվեն համապատասխան նյութական և մարդկային ռեսուրսներ:

Ա. Թադևոսյանը տեղեկացրեց նաև, որ առկա են խնդիրներ առցանց համակարգի պահպանման, զարգացման և օգտագործողի ուղեցույցի մշակման և տպագրման աշխատանքների հարցում: Նշվեց, որ որոշ ընթացակարգային խնդիրներ են առաջացել ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարման պատճառով: Առաջարկվեց նաև որոշման նախագծում ավելացնել կետ համակարգի մասին տեղեկացվածության աստիճանի բարձրացման վերաբերյալ:

2. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանը հատկապես կարևորեց առցանց համակարգի անվտանգության հարցը:

3. «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ Է. Հակոբյանը նշեց, որ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում գործող «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի լուծարումը և դրա գործառույթների վերապահումը «Սպորտային և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին չի նպաստում երիտասարդական ծրագրերի գործունեության արդյունավետ իրականացմանը, այդ թվում՝ նաև առցանց դրամաշնորհային համակարգի անխափան շահագործմանը: Է. Հակոբյանն առաջարկեց ստեղծել պետական երիտասարդական քաղաքականության ոլորտը համակարգող առանձին մարմին՝ ՀՀ կառավարությանը կամ ՀՀ վարչապետին առընթեր, որը կներառի և կհամակարգի երիտասարդական դաշտում գործող պետական կառույցները:

4. Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ներկայացված որոշման նախագիծը՝ ներառելով խորհրդի նիստում հնչեցված առաջարկությունների մի մասը:

4. «Երիտասարդ» օն-լայն պարբերական աշխատանքների մասին

(Ռ. Մարկոսյան, Տ. Սարգսյան)

1. Օրակարգի 4-րդ հարցը զեկուցեց Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօր»ության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար) Ռ. Մարկոսյանը և նշեց, որ «Երիտասարդ» օն-լայն պարբերականը գործարկվել է 2009 թվականի դեկտեմբերին, ստեղծվել և շահագործվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջոցներով «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Պարբերականի ստեղծագործական աշխատանքներն իրականացվել են ստեղծագործական խմբի՝ «Երիտասարդ լրագրողներ» ՀԿ-ի անդամների միջոցով: Ռ. Մարկոսյանը նշեց, որ «Երիտասարդ» օն-լայն պարբերականը միտված է նպաստել երիտասարդական քաղաքականության հիմնարար բաղադրիչի՝ երիտասարդական տեղեկատվության զարգացմանն ու տարածմանը:

Նա հավելեց նաև, որ ՊՈԱԿ-ի լուծարման և ֆինանսավորման բացակայության պատճառով պարբերականի նորությունների թիվը վերջին 3-4 ամիսների ընթացքում որոշ չափով նվազել էր, և այն գործում էր ստեղծագործական խմբի կամավոր աշխատանքի շնորհիվ: Ռ. Մարկոսյանը տեղեկացրեց նաև, որ վերջին ամիսներին, չնայած կայքի

տեղեկատվական որոշակի պասիվությանը, կայքի այցելությունների թիվը օրական կազմել է շուրջ 2000: Նշվեց նաև, որ շուրջ մեկ ամիս է, ինչ կայքն ընդհանրապես չի թարմացվում նորություններով: Առաջարկվող որոշման նախագծով նախատեսվում է միջոցներ ձեռնարկել պարբերականը գործարկելու նպատակով:

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ներկայացված որոշման նախագիծը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2011 թվականի N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՋԵԿՈՒՅՑԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 13-ի N 111-Ն որոշման N 2 հավելվածի 22-րդ կետին համապատասխան՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ դարձնել Հայաստանի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով և 12-րդ կետով՝ Խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի մշակման և հրապարակման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- | | |
|----------------|--|
| Ա. Քարամյան | - խմբի ղեկավար, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ) |
| Ռ. Մարկոսյան | - Եվրախորհրդի երիտասարդության և սպորտի տնօրենության դասընթացավարների խմբի անդամ (խորհրդի քարտուղար) |
| Ա. Թադևոսյան | - «Թրեյներների ազգային թիմ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ) |
| Հ. Ափյան | - Երևանի Վ. Բոյուտովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողական խորհրդի փոխնախագահ (խորհրդի անդամ) |
| Զ. Լավյան | - «Եվրոպական երիտասարդական ակումբների համադաշնություն» հասարակական կազմակերպության փոխնախագահ (խորհրդի անդամ) |
| Ա. Պապյան | - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար |
| Ա. Միրզախանյան | - ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ |

2. Աշխատանքային խմբին՝ մեկամսյա ժամկետում ներկայացնել Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի մշակման և հրապարակման աշխատանքների համալիր ծրագիր և Խորհրդի հետագա նիստերում պարբերաբար ներկայացնել հաշվետվություն աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «01 երիտասարդական ծրագրեր» ծրագրի «Համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների (փառատոններ, համաժողովներ, գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ՝ կրթական, հոգևոր-մշակութային, սպորտային) կազմակերպում» տողով նախատեսված միջոցներից ֆինանսավորել Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի մշակման և հրապարակման աշխատանքները (այդ թվում՝ սոցիոլոգիական հարցումներ իրականացնող մասնագիտացված կազմակերպության ընտրության մրցույթ, զեկույցի հեղինակների և փորձագետների հետ պայմանագրերի կնքում, զեկույցի մշակման հետ կապված խորհրդակցությունների և քննարկումների կազմակերպում, թարգմանություններ և այլն):

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2011 թվականի N 2

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ**

Նպատակ ունենալով զարգացնել Հայաստան-Սփյուռք երիտասարդական փոխգործակցությունը, աջակցել Հայաստան Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության կանոնադրության 12-րդ կետով՝ Խորհուրդը որոշում է.

1. Երիտասարդ գործարարների համահայկական առաջին համաժողովի կազմակերպման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- | | |
|----------------|--|
| Ա. Քարամյան | - խմբի ղեկավար, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ (խորհրդի նախագահի տեղակալ) |
| Ա. Պապյան | - ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար |
| Ա. Մխիթարյան | ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության պետ (խորհրդի անդամ) |
| Է. Հակոբյան | - «Ազատ հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպության նախագահ (խորհրդի անդամ) |
| Գ. Իսկանդարյան | - Երիտասարդ առաջնորդների դպրոցի համակարգող (խորհրդի անդամ) |
| Տ. Մկրտչյան | - ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչության պետ |

2. Աշխատանքային խմբին՝ մեկամսյա ժամկետում ներկայացնել Երիտասարդ գործարարների համահայկական առաջին համաժողովի կազմակերպման (2011թ. հոկտեմբեր-նոյեմբեր) համալիր ծրագիր և Խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել հաշվետվություն աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «01 երիտասարդական ծրագրեր» ծրագրի «Համահայկական, հանրապետական և միջազգային երիտասարդական միջոցառումների (փառատոններ, համաժողովներ, գիտաժողովներ, սեմինարներ, մրցույթներ՝ կրթական, հոգևոր-մշակութային, սպորտային) կազմակերպում» տողով նախատեսված միջոցներից ֆինանսավորել գործարարների համահայկական առաջին համաժողովի կազմակերպման աշխատանքները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2011 թվականի N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈՂՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՌՅԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով զարգացնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման տողով նախատեսված դրամաշնորհային ծրագրերի առցանց համակարգը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության կանոնադրության 5-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Խորհուրդը որոշում է.

1. Հանձնարարել դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խմբին՝ առցանց համակարգի զարգացման և երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից համակարգի օգտագործումն առավել հեշտացնելու նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը ներկայացնել առաջարկություններ առցանց համակարգի պահպանման, զարգացման և օգտագործողի ուղեցույցի մշակման ու տպագրման, ինչպես նաև համակարգի մասին տեղեկացվածության աստիճանի բարձրացման աշխատանքների վերաբերյալ:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «01 երիտասարդական ծրագրեր» ծրագրի «Հասարակական կազմակերպությունների կողմից դրամաշնորհային ծրագրերի հայտերի համացանցային առցանց (օն-լայն) ռեժիմով ներկայացման և մրցութային ընտրության համակարգի պահպանում և զարգացում» տողով նախատեսված միջոցներից ֆինանսավորել առցանց համակարգի պահպանման, զարգացման և օգտագործողի

ուղեցույցի մշակման աշխատանքները (ծրագրային փոփոխությունների և համակարգի կառավարման իրականացում, համակարգի օգտվողի ձեռնարկի մշակում և հրատարակում):

3. Դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի անդամ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության նախկին պետ Ա.Սողոմոնյանի փոխարեն աշխատանքային խմբում ընդգրկել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի երիտասարդական քաղաքականության վարչության պետի պաշտոնակատար Ա. Պապյանին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

10 մայիսի 2011 թվականի N 4

«ԵՐԻՏԱՍԱՐԴ» ՕՆ-ԼԱՅՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով զարգացնել երիտասարդական տեղեկատվությունը և աջակցել ազգային երիտասարդական քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կանոնադրության 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝ Խորհուրդը որոշում է.

1. Առաջարկել երիտասարդության ոլորտում Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «01 երիտասարդական ծրագրեր» ծրագրի «Երիտասարդական պետական քաղաքականության մասին էլեկտրոնային տեղեկատվության ապահովում, էլեկտրոնային թերթի հրատարակում» տողով նախատեսված միջոցներից ֆինանսավորել «Երիտասարդ» օն-լայն պարբերականի աշխատանքները և «Երիտասարդ» օն-լայն պարբերականի ստեղծագործական խմբի անդամների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՌՈՒԲԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ